

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2020 թվականի սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 8-րդ Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Մ. Վարդանյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների զծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները:
2. Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրություն:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին. - «Covid -19-ի պայմաններում նոր ուսումնական տարին սկսելու պահանջները» հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Մ.Վարդանյանը: Նա նշեց, որ տարրական դպրոցից հետո ինքն է ստանձնել դասղեկի պարտականությունները և հուսով է, որ աշակերտ- ծնող դասղեկ փոխհարաբերությունները հիմնված կլինեն փոխադարձ հարգանքի, սիրո և փոխըմբռնման վրա, միահամուռ ուժերով կկարողանան լուծել ուսումնական գործընթացում առաջացած խնդիրները:

Իր խոսքում դասղեկ Մ. Վարդանյանը նշեց, որ այս ուսումնական տարին միանգամայն տարբերվում է նախորդ ուսումնական տարիներից նրանով, որ, համաձայն Covid-19 ուղեցույցի, աշակերտները դպրոց են հաճախելու խմբերով՝ յուրաքանչյուր խումբը շաբաթական 3 անգամ, պետք է խստագույնս հետևեն հակահամաճարակային կանոնների պահպանմանը. նախապես ջերմաչափվեն տանը, դպրոց ներկայանան դիմակով, հաճախ օգտվեն դպրոցում առկա ձեռքերի ախտահանման միջոցներից, պահմանեն 1,5-2 մետր սոցիալական հեռավորություն: Նա ասաց, որ դասարանում արդեն սեղան, աթոռները դասավորված են ըստ ուղեցույցի պահանջների:

Որոշեցին.- Աշակերտներին իրազեկել հակահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ, հետևողական լինել դրանց պահպանմանը, օգնել դասղեկին այս բարդ և պատասխանատու գործում :

2. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի՝ նախագահի և անդամների ընտրության հարցը:

Դասղեկ Մ. Վարդանյանը նախ շնորհավորեց բոլոր ծնողներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ, ծանոթացավ ծնողների հետ և ասաց,

որ համագործակցելու են իրար հետ, և շատ է ցանկանում, որ այդ համագործակցությունն ընթանա փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտում: Ընկ. Վարդանյանը նշեց նաև, որ նոր ուսումնական տարում ձևավորելու են նոր ծնողական խորհուրդ՝ նախագահ և անդամներ: Ծնողական խորհուրդն ունի իր կարևոր դերն ու նշանակությունը դպրոցում կազմակերպվող ցանկացած աշխատանքներում:

Ընտրվեց ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Աբրահամյան Տիրուհի
2. Խաչատրյան Թեհմինե
3. Հովակիմյան Անահիտ
4. Թովմասյան Անահիտ
5. Ղազարյան Մարինա

Ակտիվ քվեարկության արդյունքում ծնողական խորհրդի նախագահ ընտրվեց Տիրուհի Աբրահամյանը:

Որոշեցին.- Բարեխղճորեն կատարել իրենց վստահված գործը, օգնել դասղեկին:

3. Լսեցին.- Ընթացիկ հարցեր/դասացուցակ, ռեժիմ/:

Ղասղեկը նշեց, որ նոր ուսումնական տարում դասերը սկսվելու են ժամը 9<sup>00</sup>-ին, ավարտվելու են 13<sup>55</sup>-ին (դասամիջոցները կրճատվել են), աշակերտները դասամիջոցներին տեղաշարժվելու իրավունք չունեն: Ուսուցումը վեցօրյա է:

Ղասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն ճիշտ ժամանակին, նախապես ջերմաչափված, պաշտպանիչ դիմակով, անհրաժեշտ պարագաներով, աշակերտավայել կեցվածքով: Պահպանեն հակահամաճարակային բոլոր կանոնները:

3. Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտավայել կեցվածքով, լինեն կարգապահ, դասերին պատրաստ, բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, հետևեն սանիտարահիգիենիկ վիճակին:

Ժողովի նախագահ՝  
Քարտուղար՝